

48

hungsip G2



48ար

ԳՐԴԱՆԻԿ

Ար Էղիկ

Պատմառաց .  
որ է մասն ինչ  
'ի գրոց պատ  
ճառացն Արիս  
տուտէլի . կամ  
ով ոմանք կար  
ծեն Պրոկոփի  
իմաստասիրի .

Թառըն . 1199.

1199

531


1730

52



I [Արքանութեան]





1 Ա գոյ պատճեռաց Արեւուելի ։ Հոմ  
ոնց ոճանց Բուխ Պրոկլի ։

Աստիճանիւն Աստիճանիւն ։



Ա նայն պատճառ Նախ  
կին է յաշետահեղ յիւր  
պատճառելին քան թէ  
պատճառ երկրորդ ընդհանուր ։

4

3

Արդ



8210-57

**ԱՐԴ՝** յորժամ պատճառ երկրորդ ը  
հանուր՝ իբաց բառնայ զիւր զօրու  
թէ յիրէ իմեքէ, պատճառ նախկին  
ը հանուր ոչ՝ իբաց բառնայ զիւր  
զօրութէ ինմանէ . քանզի պատ  
ճառ նախկին ընդ հանուր՝ յառա  
ջագոյն ներգործէ ի պատճառելին  
երկրորդ պատճառին, քան երրորդ  
պատճառն ը հանուր՝ որ հետեւինմա  
ներգործիցէ ինոյն իւր պատճա  
ռելին:

**ԱՐԴ՝** յորժամ երկրորդ պատճառ  
ներգործէ առ ի պատճառելին հե  
տեւեալն իւր, ոչ՝ ի բաց որոշի ներ  
գործութէ նորին ինախկին պատ  
ճառէն, քան զոր գեր՝ իվերոյէ . և  
ը անջատիլ երկրորդ պատճառին  
ի պատճառելոյն՝ որ հետեւի նմա,  
ոչ անջատի ինմանէ նախկին պատ  
ճառ վերնագոյն քան զնա . զիէ՛  
պատճառ նորին՝ զոր իբրու գաղաւ  
փարաւ բացայայտեմք՝ իձեռն գու

լոյ Ակենդանւոյն և մարդոյն. վասն  
զի՝ հարկ է նախ իրին լինիլ գոյն, ա-  
պա կենդանին, և յետոյ մարդն. ու-  
րեմն կենդանին է հուպ պատճառ  
մարդոյ, և գոյն հեռի. ապա ուրեմն  
գոյնէ սաստկագոյն պատճառ մար-  
դոյ քան զկենդանին՝ զի է պատ-  
ճառ կենդանւոյն. որ է պատճառ  
մարդոյն, ոնդ յորժամ դնես զբանա  
կանութի պատճառ մարդոյ գոյն է  
առաւել պատճառ քան զբանակա-  
նութի, զի է պատճառ նորին պատ-  
ճառին : Որոյ պատճառն է՝ քանզի  
յորժամ՝ ի բաց առնուս զզօրութի  
բանականին՝ ի մարդոյն, ոչ ևս մնայ  
մարդն. բայց մնայ կենդանին շնչա-  
ռոր և զգայուն. իսկ ընդ՝ ի բաց առ  
նուլ զկենդանին՝ ի նմանէ, ոչ մնայ  
կենդանին, և մնայ գոյն. զի դոյն ո՛չ  
՝ ի բաց առեալ լինի՝ ի նմանէ, այլ՝  
կենդանին. քանզի պատճառ ո՛չ տա-  
րալուծանի՝ ի բաց բարձմամբ իւր


պասմառելոյ . այլ՝ գոլն է պատճառ  
կենդանւոյն , և կենդանին պատճառ  
ռելի նորին . ուրեմն տակաւին մայ  
գոլն : **Արդ՝** յորժամ ոչ է անհաս  
մարդն , դոյ կենդանին . և թէ ոչ  
գուցէ կենդանին , է՝ գոլն միայն :  
**Ահա** յայտ և երեելի է , զի պատ  
ճառ նախկին և հեռի՝ է առաւել  
պարունակօղ , և սաստկագոյն պատ  
ճառ իրին քան զհուալ պատճառն .  
վէ որոյ՝ և ներգործութիւն նորին  
առաւելապէ՛ս շարավուգի ը իրին  
քան զներդործութի հուալ պատ  
ճառին : Եւ այս այնու լինի , զի է  
ութիւն կամ իր ինչ՝ նախկնաբար  
կարէ՛ իհեռի զօրութէն , և ապա յերկ  
բորդ զօրութէն , որ է ընդ առաջ  
նովի . և պատճառ նախկին օգնէ երկ  
բորդ պատճառին , ( ի վը ներգոր  
ծութ նորին , զի նմ ներգործութ  
զոր բացակատարէ երկրորդ պատ  
ճառն , զնոյնն և նախկինն բացատրէ )

սակայն՝ ըստ գերադոյն և բարձրացոյն կերպի : Եւ ը շարաբառնիլ երկրորդ պատճառին՝ ի պատճառելոյն իւրմէ՝ ոչ շարաբառնի՝ ինմանէ պատճառն նախկին, զի առաջելաղես և սաստկաբարէ շարազուգեալ ընդ իրին քան զհուպ պատճառն :

Եւ պատճառելին երկրորդ պատճառին՝ ոչ լինի հաստատեալ, եթէ ոչ զօրութեամբ նախկին պատճառին . զի յորժամ երկրորդ պատճառն գործէ իր ինչ, պատճառն նախկին՝ որ է՝ իվեր քան զնա՝ հեղու յիւր զօրութեն՝ իվր՝ այնր իրին . որոյ սակս առաւել կցորդութք շարազուգի ընդ նմա, և պահէ զնա :

Արդ՝ ահա երեւելիէ, զի հեռի պատճառն է յաւելու պատճառ էութե իրին քան զհուպ պատճառն՝ որ հետեւի նմա . ևնա զիւր զօրութին հեղու ՚ իվր՝ նր, և պահէ զնա, և ոչ

անջատի՝ ինմանէ անջատմամբ իւր  
հուպ պատճառին . այլ մանաւանդ  
՝ ինմա ննայ և մեծաւ զուգաւորու  
թք շարագուգի ընդ նմա , ըստ ո  
րում ասացաք և բացայաբեցաք:



### Առաջիւննեւն Եւկուր:

**Ա**մենայն գոյն վերնագոյն՝ կամ  
է վերնագոյն քան զյաւիտենակա  
նութի և նախ քան զնա , կամ ընդ  
յաւիտենականութեան . կամ զկնի  
յաւիտենականութե և՝ իվեր քան  
զժամանակ:

**Ե**րդ՝ գոյն գեր քան զյաւիտենա  
կանութի է՝ է՛ պատճառ նախկին , զի  
է պատճառ նորին . և գոյն ընդ յա  
ւիտենականութեն՝ է՛ իմացութի .  
զի է գոյն ընդունակու ե միւսոյն .  
ուստի ոչ կրէ ինչ և ոչ ապականէ .  
իսկ գոյն զկնի յաւիտենականու ե ,  
և նախ քան զժամանակն է՛ հոգի

որ է պարունակօղ ստորեւ աշխարհի յաշխտենականութիւն ստորնագոյն և գեր՝ իվերոց քան զժամանակն:

Եւթէ նախկին պատճառն է՝ նախքան զյաշխտենականութիւն՝ աստուստ է յայտ, զի ամ դոլն՝ ինմանէ եղեւ դտեալ:

Եւ ասեմ եթէ ամ յաշխտենականութիւն է՝ դոլն, այլ ոչ ամ դոլն է՝ յաշխտենականութիւն, յորում դոլն առաշելէ հասարակ քան ըզ յաշխտենականութիւն:

Եւ պատճառն նախկին է՝ իվեր քան զյաշխտենականութիւն, զի է պատճառելի նորին:

Իսկ յիմացութիւն հակադրութիւն կամ հանդիտանայ յաշխտենականութիւն, զի ընդ նմա տարածանի և ոչ այլայլի և ոչ ապականի. իսկ հաղին շարադրուգեալ է ընդ յաշի տենականութիւն ստորնագոյն դոլով

յաւետ ընդունական ապահովութեան գան  
թե քան զիմացութիւն, և է՛ ի վեր  
քան ղժամանակն , զի է՛ պատճառ  
ժամանակին :

---

Առարկան Երրորդ :

**Ս**ամենայն հոգի ազնուական՝ ու-  
նէր երիս ներդործութիւն :  
Կենդանական , իմացական և Աստ-  
ուածային :

**Արդ՝ Աժային** ներդործութիւն է , որ  
նախ պատրաստէ զբնութիւն հան  
գերձ զօրութիւն՝ որ ՚ի նմա գոյ ՚ի  
նախկին պատճառէն և յիմացակա-  
նէն . զի գիտէ զէութիւն իրաց զօ-  
րութիւն իմացականին՝ որ ՚ի նմա : Եւ-  
կենդանական է , զի շարժէ զմար-  
մին առաջին և զանմ բնական մար-  
մինս՝ ելով պատճառ շարժութեան  
մարմոց , և պատճառ ներդործուե-  
բնութեանն :

Եւ զայս ներգործութիւնս հոգին  
բացակատարէ , զի է ապացոյց զօ-  
րութեն վերնագունի . քանզի պատ  
ճառ նախկին ստեղծ զգոյն ըստ հո-  
գւոյն միջնորդութիւն իմացութեն .  
վա որոյ՝ հոգին եղե ներգործող  
Ածային ներգործութեանն :

Արդ՝ պատճառն նախկին՝ յետ ըս-  
տեղծանելոյ զգոյն հոգւոյն , եդ ըզ  
նա իբր գործի իմացմանն , որով առ  
նիցէ զներգործութիւն իւր . որոյ  
աղագաւ՝ հոգի իմանալի բացակա-  
տարէ զներգործութիւն իմացութեն :  
Բայց զի ընդունի զնկարակերպու-  
թի իմացութեն , եղե ընդ ներգոր-  
ծութիւն ստորնագունին քան զիմա-  
ցութեն իւր . տպաւորութիւն առ-  
այն , որ ընդ նովաւ է . քանզի ինքն  
ո՛չ տպաւորէ զզօրութիւն , եթէ ո՛չ  
շարժմամբ : Մա ո՛չ ընդունի զներ-  
գործութիւն նորին , ընդ նովաւ գո-  
լով , եթէ ո՛չ շարժեսցի իմ՝ ինմանէ :

Ուրեմն վե այսր սպատճառիս հո-  
գի շարժէ զմարմինս: քանզի յատ-  
կութի է հոգւոյն կենդանացուցա-  
նել զմարմինս, հեղլով՝ ինս զօրու-  
թի իւր, և յառաջ տանելով առ՝ ի  
ուղղամիկս ներդործել: Այս ու-  
րեմն յայտ իսկ է եթէ հոգի ունի  
երիս ներդործութիս զի ունի երիս  
զօրութիս: այսինքն Ածային, և ի-  
մացութե, և էութե իւրոյ, ըստ ո-  
րում ճառեցաք, և բացատրեցաք:

---

Առաջին Բիոն Չորրորդ:

Առաջինն յարարածոցսէ՛ գոյն, և  
նախ քան զնա չիք ինչ այլ եղեալ.  
քանզի է՛ ի վեր քան զգոյութի  
և քան զհոգի, և քան զիմացութի.  
և զինի նախին սպատճառին չիք  
ինչ լայնադոյն և նախինագոյն ըս-  
տեղծեալ քան զնա, որոյ սակս՝ եղեւ  
վերնագոյն նամ եղելոցս և առաւել

միաւորեալ: Եւ այս եղեւ վէ մեր  
ձաւորութեան իւրոյառ դոյն մի,  
պարզ և ճշմարիտ. յորում ոչ դոյ  
բազմութի ոմանց եղանակաց:

Եւ դոյն ստեղծեալ՝ թէպէտ մի ի-  
ցէ, սակայն բազմապատկի, այսինքն  
ընդունի զբազմապատկութի՝ բայց  
նոյն ինքն ոչ եղեւ յոլով, եթէ ոչ  
այն իսկ որ թէպէտ պարզ իցէ, քան  
զնա իցէ պարզագոյն՝ իստեղծած  
սակայն է՝ բաղադրեալ՝ ի հունա-  
շորէն և յանհունէն քանդի գոյն  
սորա՝ որ անընդմիջապէս հետեւի  
նախկին պատճառին է՝ իմացութի  
շարալցեալ մակ վերջին զօրութեն,  
և մակ այլոց բարուեցն: Եւ տեսակը  
իմացականք՝ ինմա են լաւագոյնք  
և ընդհանրականագոյնք. իսկ որ  
յայնմանէ ստորնգոյն է իմացութ,  
սակայն ընովաւ է իմացութ ներ  
շարալրութ զօրութ և բարութիք:  
Եւ տեսակը իմացականք ոչ են այս

քան ընդարձակեալք ՚ ինմա : Զոր  
օրինակ՝ ընդարձակուի նց նայնմ  
շարալցեալ իմացութեն . իսկ դոյն  
ստեղծեալ առաջին է՝ բոլոր մակ  
իմացութեան , սակայն իմացութէ  
է՝ ՚ ինմա զանազան ըստ ասացեալ  
կերպին , և զի իմացութէ զանազա  
նի , և տեսակ իմացական զանազան  
՚ ինմա լինի . և զորօրինակ՝ իտեսակէ  
միոթէ , այնու զի զանազանի , իստոր  
նագոյն աշխարհիս յառաջ ելանեն  
անհատք անհունքն բազմութե ,  
ոնզ՝ իգոլոյն պատճառելոյն յառաջ  
նոյն՝ վասն զանազանալէս ինքեան  
լինելոյ՝ տեսակք իմացականք ան  
հունք երեին :

Այլ սակայն՝ թէ այէտ զանազանին՝  
և ոչ անջատին՝ իմիմեանց , ոնզ է ան  
ջատումն անհատից . քանզի նոքա  
միաւորին թարց ապականութեան ,  
եւանջատին առանց որոշման . զի են  
մի ունօղ բազմութե՝ և բազմութէ  
ժդ 14 ՚

իմրութեան։ Իսկ իմացութիւնքն  
առաջինք հեղուն՝ ի վր իմացու-  
թեանցն երկրորդաց զզօրութիւնա  
և զբարութես, զորս ընդունին՝ ի  
նախկին պատճառէն, և այնչափ վե-  
րածեն զբարութիւնս՝ ինս, մինչեւ  
կալցեն զվերջին նոցունց։

---

Ա-սորէութիւն Հենդեւութ=

ի նացութիւնք վերնագոյնք ա-  
ռաջինք՝ հետեւ օղք նախկին ողա-  
ճառին՝ տպաշորեն զերկրորդ աե-  
սակս կայունո՝ որք ոչ աղականին։  
մի՛ զուցէ հարկաւոր իցէ եղեազ  
զնս միւսանգամ. իսկ երկրորդ ի-  
մացութիւնք տպաշորեն զտէսակա-  
անկայուն անջատելիս, որպիսի է հռ-  
գի. քանզի՞ աս է՝ իտպաշորութե-  
երկրորդ իմացութե՝ որ հետեւի ըս-  
տեղծեալ գոլոյն ստորագունի։  
Եւ հոգիք ոչ բազմանան, եթէ ոչ

կերտիւ, որով քաղմանան իմացու  
թէք. վասն զի գոլն հոգւոյն ունի  
վախճան, և որ ինչ 'ինմանէ դոյ  
ստորնագոյն է անհուն : Ապա ու  
ըեմն հոգիքն հետեւեալք վերջին ի  
մացմանն են շարալցեալք և կատա  
րելք, և դուզնաքեաց խոնարհումն  
և անջատումն ունին . իսկ հոգիք հե  
տեւեալք դոլոյն ստորնագունին են  
ներ շարալրութե, և խոնարհման 'ի  
ներքոյ հոգւոցն առաջնոց և վերջ  
նոց : Եւ հոգիքն վերնագոյնք ըղ  
բարութիս ընկալեալք յիմացուէն  
հեղուն զհոգիս ստորնագոյնօ:

Եւ ամ հոգի ներբնդունական զօ  
րութե յիմացութէն առաւել զօ  
րագոյն 'իվր տալաւորութեն, և որ  
ինչ 'ինմանէ դոյ 'տալաւորեալ է  
հաստատուն և կայուն և շարժուն

նր՝ հասարակ և շարունակ :

Իսկ այն ուր դոյ առ 'ինմանէ զօ  
րութիւն իմացմանն է փոքրագոյն

քան զտովաշորութե՛ և էութիւն  
ապաշորեալ առ՝ ինմանէ անզօր և  
անցաւոր և յեղեղուն և ապականա  
ցու։ Բայց սակայն թէպէտ այսպա  
իցէ՝ այլ իձեռն ծնելութե՛ մնայ։  
Արդ՝ ահա ցուցաւ, թէ ոյր աղաւ  
պաւ տեսակք իմացականք բգւմք  
եղեն, և գոլն նց պարզ և թէ է՛ր  
վս հոգեք յոլովք, որոց ոմանք քան  
զայլս զօրագոյնք, և գոլն նոցա մի  
պարզ յորում ոչ գոյ զանազաւ  
նութիւն։

Առաջնաբեր Վեցերուն։

Պատմառ նախիին՝ գեր իմբերոյ է  
քան զեմ ճառողութիւն. և լեւ  
զուք մարդկան ոչ դադարին, և  
ոչ նուազին իմառելոյ զնմանէ, եւ  
թէ ոչ սակս գոլոյ նորին։ Քանզի՞ ի  
մբեր է քան դամ պատճառ, և ոչ ճայ  
ռեալ լինի, եւ ոչ ոչ իձեռն պատ-

Բ 45 17

8210-57




Նառաց. ԱԵՐԿՐՈՐԴ-ԱԳ՝ որք լուսա-  
շորին՝ ի լուսոյ նախկին պատմա-  
ռին. զի նախկին պատմառն ոչ դա-  
դարի՝ ի լուսաւորելոյ զիւր պատ-  
մառելին, բայց ինքն ոչ լուսաւո-  
րի. ի լուսոյ յիմեքէ, զի է լոյս պարզ՝  
քան զոր շեք այլ լոյս՝ ի վեր, այլ  
նախ ինքն ի վեր ամցնց:

Ուրեմն այնու միայն պատմառ նախ  
կին եղեւ, զորմէ ճառել ոչ է կար,  
զի շեք նախ քան զնա այլ պատմառ,  
որով ճանաչեւր. քանզի ամ իր ոչ  
ճանաչի, եթէ ոչ՝ ի պատմառէն  
ի րմէ: Արդ՝ որովհետեւ էու թիւն  
միայն է պատմառ, և շեք պատմա-  
ռելի, որ ոչ գիտացեալ լինի՝ իձեռն  
նախկին պատմառին, և ոչ ճառե-  
ցեալ ելոյր՝ ի վեր քան զճառելն:  
և ոչ հասանի՝ ինա բան, զի ճառու-  
զութէ լինի բանիւ, և բան իմաց  
մամբ՝ և իմացումն խորհրդով, և  
խորհուրդ մտածուք, և մտածուե

զգայութք. իսկ պատճառն նախկին  
գերիվերու, և քան զամ իր՝ զի է  
պատճառ նոցոնցու բեմ այնր ա-  
զագաւ ոչ անկանի ընդ զգայութ,  
և ոչ ընդ մտածութք. և ոչ ը խոր  
հրդով, և ոչ ընդ իմացմամբ, և ոչ  
ընդ բանիւ. ուրեմն է անճառելիւ  
Դարձեալ ասեմեթէ էութի իւշ  
կամ է զգալի և ընդ զգայութ ան-  
կանի. կամ մտածելի և ընդ մոա-  
ծութք անկանի. կամ կայուն և հաս  
տատուն ըստ տրամադրութե միում  
և է իմանալի. կամ փոփոխելի և ա-  
պականացու անկեալ ընդ լինելու  
թք և ապականութք, և խորհրդա-  
ծութեամբ ըմբռնի իսկ պատճառն  
նախկին գեր իվերոյ և քան զամ  
էութիս իմանալիս մշտ ջենառա,   
և էութիս ապականելիս. վս օրոց  
ոչ անկանի ՚ինա զգայութի և ոչ  
մտածութի և ոչ խորհուրդ և ոչ  
իմացում:

Բայց ինքն ո՞չ լինի նշանակեալ եւ  
թէ ո՞չ յերկրորդ պատճառէն, որ է  
իմացունի, և ո՞չ անուանի, եթէ ո՞չ  
անուամբ իւր պատճառելոյն ա  
ռաջնոյն, եթէ ո՞չ բարձրագոյն և  
լաւագոյն կերպիւ, զի ելով գոյն  
պատճառելեացն է գոյն . սակայն  
ըստ գերագոյն և մծագոյն և լա  
շագոյն և պատուականագոյն եղա  
նակին, ոնց ցուցաք :



Առաջին Եօլուցորդ :

**Ի** ացութիւն է գոացութիւն որ ո՞չ  
հատանի զի եթէ ո՞չ ըստ մեծու  
թէ և ո՞չ մարմին . և ո՞չ շարժի . ու  
բեմ առանց երկբայութեն ո՞չ բա  
ժանի : Եւս ամ բաժանելի ո՞չ հա  
տանի, եթէ ո՞չ կամ իբաղմութիւն  
կամ իմեծութիւն կամ ի շարժում  
իւր . Արդ իրին ելոյ ըստ այսմ տը  
բաժադրութեն է ընդ ժամանակաշ

զի ոչ ընդունի բաժանումն, եթէ  
ոչ՝ իմամանակի: Եւ իմացութիւն  
ոչ է ընդ ժամանակումն: այլ մա-  
նաշանդ ընդ յաշիտենականուն.  
որոյ սակս՝ եղեւ վերնագոյն և բարձ  
րագոյն քան զամ մարմին և քան  
զժամանակ, և քան զամ բազմուն. իսկ եթէ դտանիցի՝ ինմա իմն բազ  
մութի, ոչ գոցի, եթէ ոչ իբրու միւ-  
ոյ իրի եղելոյ:

Արդ՝ զիմացութէ ըստ այսմ տա-  
րագու ոչ երբէք ընդունի բաժա-  
նումն. և այսր նշանակութի՝ իդար  
ձու մն նորին առ էութի իւր. ֆա-  
զի ոչ տարածի ընդ իրին տարածե-  
լոյ իմն չափակցութիք. մինչ պի իցէ  
մի յեզերաց իւրոց, և երբորժ յայլ  
մէ. վազի յորժամ կամի, ունել գե-  
տութի՝ մարմնաշորին՝ ոչ տարա-  
ծեալ լինի ընդ նմին, այլ կայ ան-  
շարժ ըստ իւրում տրամադրուն.  
զի է տեսակ, որով ոչ անցանի յայլ  
իա 21 ինչ:

Բնչ. իսկ մարմինք ոչ են այսպիսիք։  
Աղե իմացութի ոչ է մարմին յայտ  
է՝ քանզի ոչ բաժանի գոյացութի  
նր և ոչ ներգործութի. և երկոքին  
մի իր են. բայց իմացութի՝ է յոլով  
վն բարուեցն յառաջ եկելոց նմա  
՝ ինախիին պատճառէն. ևնոյն ինքն  
թէուէտ բազմանայ ըստ այսմ կեր-  
պի, սակայն մերձ կալով առ միակն  
է անհատելի:

Եւ այսպէս իմացում ոչ ընդունի  
բաժանում զ. է առաջ ն պատճա-  
ռելի ստեղծեալ՝ ինախիին պատճա-  
ռէն և միութի յան զբուժանում  
սլատուականագոյն է :

Արդ՝ ահա սաոյգ իսկ եղե, թէ ի-  
մացութի՝ է գոյացութի. որ ոչ ընդ  
մեծութե է և ոչ մարմին և ոչ շար-  
ժի ըստ կերպի ուրուք շարժութե  
մարմնոյ: Վն որոյ նախ քան դժա-  
մանակն եղե ընդ յաշիւ ենականու-  
թե ող ցուցաւ:

Առաջնաբերուն Ո-բներութ:

Մենայն իմացութիւնն գիտէ, որ  
ինչ 'իվերէ քան զինքն՝ ' և որ  
ինչ 'իներքոյ իւր՝ զի է պատճառ  
նորին. և գիտէ զայն՝ որ 'իվերէ քան  
զինքն՝ զի 'ինմանէ ընդունի բա-  
րութիս: Եշ իմացութիւնն է գոյա-  
ցութի իմացական. ուրեմն ըստ կեր  
պի գոյացութե իւրոյ՝ գիտէ զիրսն  
ընկալեալս՝ ի վերուստ, և զէութի սն  
որոյ է՝ պատճառ և բացորոշաքր ճա-  
նաշէ և գիտէ զմինն իբրե զիւր  
պատճառն. իսկ զմիւսն զպատճառե-  
լի յիւրմէ, և ճանաշէ զպատճառն  
իւր և զպատճառելին ըշ կերսի գոյ  
ացութեան և գոլոյն իւրոյ. ող և  
ճմ գիտօղ ոչ գիտէ զէութի լաւա-  
գոյն և մեծագոյն, և զէութի ստոր  
նագոյն և յոռեգոյն, եթէ ոչ կեր-  
պիւ գոյացութեան և գոլոյն իւրոյ.

այլ հչ կերպիւ ըստ որում էու էքն  
են: Եւ եթէ այսպիս իցէ, ապա ան  
երկբայաբար բարութիքն իջեալք  
'ինախկին պատճառէն' իվր իմացու  
թեան են իմանալիք 'ինախն, նոյնողս  
և էութիքն մարմնաւորք զդալիք  
ներ իմացութեն են իմանալիք. վշ  
զի՝ էութիքն ներ իմացութեն ոչ  
են տպաւորութիք նոյն ինքնանք,  
այլ մանաւանդ պատճառ տպաւու  
րութեանցն:

Եւ զի իմացութի՝ է պատճառ. 'ի  
ներքոյ իւր իրացն, յացտէ՝ զի է  
միացն իմացութի. արդ՝ եթէ իմա  
ցութիւն է պատճառ իրացն, որք  
ընդ իւրեւ են վշ ելոյ իմացութի.  
ուրեմն ստուգաղիս և իրացն պատ  
ճառք են իմանալիք 'ինախն:

Արդ՝ ահա յայտ է՝ թէ միութիքն  
վերնայինք քան զիմացութիւնքն,  
և ստորնայինքն քան զինքն են 'ի  
ճեռն իմանալի զօրութեն, սոյնուհս  
իդ. 24 ե

Եկութեն մարմաւորք ներ իմաց  
ցութեն են իմանալիք, և էութեն իմանալիք ներ իմացու են են իմանալիք զի է պատճառ գոյոյն նորունց եզնա ըմբռնէ կերպիւ գոյացութեն երոյ : Եւ զի իմացութեն է՝ իմացական ըմբռմամբ ըմբռնէ զէու իս. թէ իմանալիք իցեն, թէ միրմաւորք :

### Աստրիութիւն Խննեցորդ :

Ա մանայն իմացութեան հաստացատութիւն եկութիւն 'ի ձեռն պարզ բնութեանն, որ է պատճառ նախկին եզօրութիւն իմացութեան, յառաջնոյն գոյ առաւել միաւորեալ, քան զերկը որդ էութիւնս որք են զկնի նր, զի ոչ ընդունին զմանաչումն նորին. և այս եղեւ վա երոյ պատճառ այնմ, որ ընդ իւրեն է, և նշանակութիւն յիշեցելոցս այս է. քանզի իմացութիւն է իշխող իւ

ամընդ իւրե էութեանցն՝ զօրութիւնն ածայնով, զոր ունի յինքեան, որով պահէ զէութիւնս:

Քանզի ՚ի ձեռն այնորին՝ է պատշառ իրաց . և զամ զի՞ներքոյ իւր զիբսն ունի, և պահէ զնս, զի ամոր ինչ է սկիզբն իրաց, նաև պատշառէ նոցունց պահէլով և կառավարելով զնս . և ոչ ինչ յայնցանէ փախչի վս զօրութեան իւրոյ:

Ապա ուրեմն իմացողութիւն՝ է իշխող ՚ի ներքոյ իւր իրացն, և պահող և կառավարող . և զոր օրինակ բնութիւն՝ է կառավարող ընդ իւրե իրացն զօրութիւն իմացմանն, սոյնպս և իմացութիւն կառավարէ զբնութիւն ածային զօրութիւն . իսկ իմացութիւն աչ այլ ինչ իւրիք եղեւ զինի ընդ իւրեւ իրացն պահող և կառավարող կախելով զօրութիւն իւր ՚իվը նց, եթէ ոչ այնու՝ զի նոքա ոչ են զօրութիւն գոյացական սմին . այլ

մանաշանդ սա է զօրութիւն գոյ  
եղ զօրութեցն՝ ելով պատճառ նու  
ցունց. և իմացութիւն բակառէ զե  
զեալսն, և զբնութիւն՝ և զաշխարհս՝  
զպարունակօղն բնութեն, չո զհո  
դի. զի է 'ի վեր քան զբնութիւն,  
վա զի բնութիւն պարունակէ ըզ  
լինելութիւն. և հոգի զբնութիւն,  
և իմացութիւնն զհոգին. ասդա ի  
մացութիւն պարունակէ զնամիրան.  
և այս վա նախկին պատճառին որ  
գերազանցէ քան զնամէութիւնս.  
զի է պատճառ իմացութեն և բնու

թե և այլոց իրաց:

Իսկ պատճառն նախկին ոչ է իմա  
ցութիւն և ոչ հոգի և ոչ բնութիւն.  
այլ մանաշանդ՝ գեր իվերոյ քան  
զիմացութիւն և զհոգի և զբնութիւն.  
զի է արարչական ամ իրաց. ւակայն  
է պատճառ իմացութեն, անընդմիւ  
ջաբար: Իւկ հոգւոյն և բնութեն և  
այլ իրաց, միջնորդութ իմացութեն:

Եւ զիտութիւնն ածային, ոչ է իք  
րե զգիտութիւն իմացական, և ոչ  
իբրե զգիտութիւն անձնաւորին,  
կամ հոգւոյն. այլ մանաւանդ՝ գեր  
բնապէս քան զգիտութիւն իմաց  
ութեն և հոգւոյն, զի է պատճառ  
սոցայց: Եւ զօրութիւն ածային  
՚իվեր է քան զամ զօրութիւն իմաց  
ական և ներ անձնաւորական և  
բանական, զի է պատճառ ամ զօր  
ութեն: Եւ իմացութիւն է ունօղ  
բաղադրութեն, զի է գոյն և տեսակ:  
Այսպէս և հոգի՝ է բնուեն ունօղ  
բաղադրութեն. իսկ նախկին պատճառ  
ոին՝ ոչ գոյն բաղադրութիւն. զի է  
գոյն միայն: Իսկ եթէ ոք ասիցէ  
հարկաւոք գոյն նմա բաղադրութեն,  
ասեմք՝ եթէ գոյն իւր է անհուն,  
և հատողութիւն նորին է պարզ  
բարութիւն իւր. որ հեղու զամ  
բարութիւնս՝ իմը իմացութեանն,  
և միջնորդութիւնը սորին՝ իվերայ այլ  
եւթեանց:

# Առաքէութիւն Տառերրու

**Ա**լենայն իմացութիւն՝ լի տես  
սակօք . սակայն իմացութեանց  
ոմանք պարունակեն զտեսակօք ա-  
ռաւել ընդհանուրս, և ոմանք ըզ  
նուազ ընդհանուրս . քանզի տե-  
սակօք, որք են յիմացութիւնս երկ  
բորդս, մանաւանդ մասնաւոր կեր  
ողիւ յիմացութիւնս առաջինս՝ են  
ընդհանուր կերպիւ :

**Ե**ւ տեսակօք, որք են յիմացութիւն ա-  
ռաջինս ըհնուր կերպիւ, յիմացու-  
թիւ երկրդս են մասնաւոր կերպիւ :  
**Ե**ւ յիմացութիւնս յառաջինա մեծ  
գոյ զօրութիւն, զի առաւել ու-  
նին և սաստկագոյն քան զերկրորդ  
ընդհանուր ստորնագոյն իմացու-  
թիւնս . իսկ յիմացութիւնս յերկ  
բորդս ստորնագոյնսն՝ են զօրութիւն  
սակաւազօրք: զի նուազ ունին զի  
մացութիւն և զյաւետ բազմագոյ-

մութիւն . վասն զի իմացութիւնք  
հուպք պարզ միակին . ճշմարտին  
ունին զնուազ քանակութիւն և  
զառաւել զօրութիւն . իսկ իմացու  
թիւնք հեռացեալք 'ինմանէ , ու  
նին զյաւէտ քանակութիւն ևըզ  
նուազ զօրութիւն : Եւ զի իմա  
ցութիւնք հուպք պարզ միակին ,  
ունին զնուազ քանակութիւն և  
ղծասոկագոյն զօրութիւն : աստուստ  
պառահի զի տեսակքն , որք ելանեն  
'ի յառաջին իմացութեանցն , ելա  
նեն ընդհանրապէս միացեալ ելո  
ղութիւն : Չոր համառատեսցուք և  
ասասցուք եթէ տեսակքն , որք յա  
ռաջ գան 'ի յառաջն իմացուեցն ,  
երկրորդ իմացութիւնս ունին ըզ  
նուազագոյն ելողութիւն և զսաստ  
կագոյն անջատում . վշ զի իմացու  
թիւնք երկրորդք վերաձգեն կեր  
ոլիշ ստորնագունին զաւսութիւնս  
իւրեանց առ 'իընդհանուր տեսակն

որ է ներ իմացու թեց ընդհանրից,  
և բաժանեն զնա և բացորոշեն քան  
զի ինքեանք ո՞չ կարեն ընդունել  
պատսակսն զայնոսիկ ըստ միութեն  
և զըստուգութեն իւրեանց. Եթէ ոչ  
կերպիւ ըստ որում կարեն ընդու-  
նել զնս . յու բացորոշմամբ և բա-  
ժանմամբ . սոյնպէս և այլ ինչ իրաց  
ո՞չ ըստնին զ' իվերոյսն քան զինքն,  
Եթէ ո՞չ ըստ կերպի կարողութեան  
ընդունելոյ զնս , այլ ո՞չ ըստ կեր-  
պի ըստ որում է ընդունելի:

---

Առարկութեան Մեպաստներուն

**Ա**մենայն իմացութիւն՝ իմանայ  
զմշտնջենաւոր էութիս, որք  
ո՞չ ապականին՝ և ո՞չ ընդ ժամանա-  
կաւ անկանին . քանզի եթէ իմա-  
ցութի է միշտ էութի, որ ո՞չ շար-  
ժի . ուրեմն ինքն է պատճառ իրացն  
մշտնջենաւորաց , որք ո՞չ ապակա

ծին և ոչ յեղաշոջին, և ոչ ընդ ժամանակաւ անկանին և ոչ ընդ լինելութք. Եւ զի՞ իմացութիւն իմանայ զիւր գոլոմն, և իւր գոյն է մշուն ջենաւոր և մշտակայ. սյնր աղագաւ գաւ՝ ոչ աղականի:

**Ա**րդ՝ որովհեան այս այսոյէս է, ասէմք եթէ էութիք աղականելիք՝ են ՚իմարմանաւոր և ՚իժամանակաւոր պատճառէ, և ոչ յիմացական և յաւիտենական սղառճառէ:

## Առաջին Երեսութեան Երեսութեան:

**Ա**ռաջինս ամենից ոմանք են մակամանց կերպիւ որովպատշաճ է՝ զի մի յայնցանէ իցէ այլում. քանդի ՚իգոլումն են կեանք և իմացութիւն, և ՚ի կեանսն են գոյն և իմացութիւն, և յիմացութեն գոյն և կեանք: Բայց սակայն գոյն և կեենք ներ իմացութեն են երկու իմացու-

ԹԵՔ. և գոլն և իմացութեն ներ կե-  
նացն, են երկու կեանք. և իմացու-  
թեն և կեանք ներ գոլցն, են երկու  
դոլ. և այս այնու լինի, զի իւրա-  
քանչիւրքն առաջինքն, կամ է՛  
պատճառ, կամ պատճառելի. ուրեմն  
պատճառելի է՝ իւրատճառում կեր-  
պիւ պատճառին. և պատճառում ՚ի  
պատճառելում կերպիւ պատճառե-  
ցոյն: Չոր ՚իկարժոյ ասեմք, եթէ  
եռւթե ինչ ներգործող՝ ՚իցիր իմ  
կերպիւ պատճառին, ոչ է ՚ինմա,  
եթէ ոչ՝ կերպիւ ելոյ պատճառք  
նորին:

Չոր օրինակ զգայութեն ՚իհոգւոջ  
ներ անձնաւոր կերպիւ. և հոգի  
ներ իմացութեն իմացական կերպիւ.  
և իմացութեն ՚իգոլութեական կեր-  
պիւ, և գոլն նախկին ներ իմացութեն  
իմանալի կերպիւ, և իմացութեն ՚ի  
հոգւոջ կենդանական կերպիւ, և  
հոգի ՚իզգայութեն զգայական կեր-  
պիւ:

Արդ՝ անդրադարձուք և ասաս  
ցուք եթէ զգայութեն՝ իհոդւոջ,  
և իմացութիւն՝ ինախկին պատճա  
ռում՝ են՝ իձեռն եղանակաց նմա  
նից և զանազանից, ըստ որում  
ցուցաք:

Առաջին բառ Երեւանի բարձր:

Մենայն իմացութիւն իմանայ  
ալէութիւն իւր, զի իմացութ և  
իմացեալն՝ են համանդամայն:  
Արդ՝ զի իմացութիւն է իմացող և  
իմացեալ, ուրեմն առանց երկրացու  
թե տեսանէ զէութիւն իւր, և տես  
նելով զէութիւն իւր՝ գիտէ և իմա  
նայ իմացմամբ զէութիւն, և գիտե  
լով զէութիւն իւր, գիտէ և զայլ չ  
իւրեւ իրսն, զի են առ՝ ինմանէ, աշ  
կայն՝ ինմա են իմանալի կերպիւ,  
ուրեմն իմացութիւն և իմացեալն՝ են  
մի, գանզէ եթէ իմացեալն և իմա

ցութեն են մ, և իմացութե գիտէ  
զէութե իւր . ասպա ուրեմն ստու-  
դապէս գիտելով զէութե իւր, զէ  
տէ եղայլ էութիւնս . և զիտելով  
զայլ էութե՝ գիտէ զնն իբրու զէ  
մացեալս : Ասպա ուրեմն իմացութե  
գիտէ զէութիւն իւր և զիմացեալ  
իրս համանգամայն, ողբ բացայայ-  
տեցաք :

Առուրեւ-Բեւն Զ-ը Եւդամունեցուք :

**Յ**ամ ոդւոջ՝ են զդալի իրք . այ-  
նու զի՝ է գաղափար նոցունց,  
և իմանալի իրք են՝ ինմա, զի գիտէ .  
քանզի տարածեալ է՝ իմ. ջ իմանա  
լեացն՝ որք ո՛չ շարժին և՝ իմ. ջ զա-  
լեացն որք շարժին :

Եւ զի հոգի այսպիսի է տաշանոքէ  
զմարմանոր իրս . որոյ սակա եղեւ  
պատճառ մարմնոց, և պատճառելին  
յիմացութեն քան զինքն վերնոյն .

ուրեմն իրքն տայաշորեալք առ ՚ի  
հոգւոյն ինմա են զօրութիւն դադա  
փարին . ց զգալի էու թիւք դաղա  
փարեալ լինին ըստ դաղափարի հո  
գւոյն , և էու թիւքն որք անկանին  
՚ի հոգին . են ՚ի հոգւոջ ստացեալ  
կերպիւ :

Արդ՝ այսոյէս ելոյ՝ դարձյուք ե  
ասասցուք . եթէ ամզգալէք են ՚ի հո  
գւոջ կերպիւ իւր պատճառին . վա  
որոյ հոգի է իրրու պատճառ դա  
զսփարին :

Եւ զհոգին իմանալ պարտէ , այս  
ինքն զօրու ն ներգործական՝ ՚ի հո  
գւոջ ոչ է նիւթական . և զօրութիւն  
մարմաշոր՝ ՚ի հոգւոջ է հոգեոր . և  
զօրութիւն տայաշորագ յիրս՝ ունոցս  
զշափակցուիս . կամ բաժանմունս՝  
է առանց մարմաշոր շափակցու  
թեց . և բաժանման :

Լսկ իմանայի էութիւք են ՚ի հոգւոջ  
պատճական կերպիւ . ց զի իմա

նալի էութիւն , որք ո՛չ բաժանին  
են՝ իհոգւոջ բաժանական կերպիւ :  
Ուրեմն իմանալի էութիւն են միա-  
ցեալք՝ իհոգւոջ բազմապատկեալք  
կերպիւ , և իմանալի իրք . որք ո՛չ  
շարժին՝ են՝ իհոգւոջ շարժութեն  
կերպիւ :

Արդահացուցաւ թէ իմանալի են  
զգալի էութիւնքն են՝ իհոգւոջ .  
բայց սակայն զգալի էութիւնք մարմ-  
նաւորք շարժեալք են՝ իհոգւոջ  
կենդանական կերպիւ . հոգեոր մի-  
ացեալք և իմանալի էութիւնք միա-  
ցեալք և դադարեալք են՝ իհոգւոջ  
կերպիւ , որ բազմայուցանէ զար-  
ժութիւն :

---

Առաջինիւն Հանդիպուներորդ :

Մենայն դիտօղ , որ դիսէ զեռ-  
թիւն իւր՝ է՛ դարձող առ է-  
ռթի իւր շարալցեալ դարձմամբ .

քանզի գիտութիւն ոչ է՝ եթէ ոչ  
ներգործութիւն իմացողին:

Արդ՝ գիտող գիտելով զէութիւն  
իւր, դառնայ իմացական ներգոր-  
ծութիւն իւրով առ էութիւն իւր.  
ևայս այնու է, զի գիտողն եգիտա-  
ցեալն են մի իր. քանզի գիտութիւն  
գիտողին զիւր էութիւնն է առ ՚ի  
նմանէ ևառ նա: առ ՚ինմանէ, զի է  
գիտող էութե իւրոյ. ևառ նա, զի  
է գիտեցեալ: Եւ ՚իգիտուե է գի-  
տութիւն գիտողին, և գիտողն գի-  
տէ զէութիւնն իւր, զի ներգործու-  
թիւն նորին է գարձօղ առ էութե  
իւր. աղա՝ գոյացութիւն նորին է  
գարձօղ առ էութիւն իւր միւս-  
անգամ: Բայց գարձմամբն գոյա-  
ցութեան առ էութիւնն միւսան-  
գամ՝ ոչ այլ ինչ նշանակէ, եթէ ոչ  
զի է կայուն և հաստատե, ինքեամբ  
յիւրում հաստատութե և էութիւն  
ոչ կարօտացեալ այլում իմիք, որ

կառավարիցէ զնա . քանդի է գոյա  
յութիւն պարլ ինքեամբ իւրեան  
բանական :

Առարիստիւն Վելքաստներոց :

**Ա**մենայն զօրութիւնք , որոց ո՛չ  
վախճան կախեալ կան զնախ-  
կին անհնէն , որ է զօրութիւն զօ-  
րութեց . ո՛չ եթէ զինքն ասացեալ  
իցէ հաստատուն , կայուն յէական  
այլ զի է զօրութիւն էակաց՝ զհաս  
տատութիւն ունողաց :

Իսկ եթէ ոք ասիցէ զառաջին է-  
ակն ստեղծեալ , զի իմացութի՝ գոլ  
զօրութիւն , որոց ո՛չ գուցէ վախ-  
ճան . ասեմք , եթէ ո՛չ է ճշմարիո .  
այլ մանաւանդ՝ զօրութիւն իմ , և  
զօրութիւն նորին ո՛չ է եղեալ ան-  
հուն , եթէ ո՛չ ստորնագոյն . և ո՛չ  
վերնագոյն՝ զի ո՛չ է այն զօրութի՝  
պարզ , որ ո՛չ է զօրութիւն եթէ ո՛չ

գի է իր , որ ոչ եղեալ լինի ստոր  
նագոյն , և ոչ վերեագոյն . իսկ առա  
ջն ստե , ծեալն , դի իմացու թիւն՝  
ունի վախճան . և զօրութիւնն ու  
րին է վախճան վերեագոյն , ըստ ո  
րում կայ և մնայ պատճառ նորին :  
Բայց եակն նախկին արարշական  
է անհուն՝ պարզ՝ առաջին . վա զի  
եթէ զօրաւորականացն ոչ դոյ վախ  
ճան վա իւրեանց ստացմանն առ ’ի  
նախկին պարզ անհուն , որոյ սակա  
ն էակը անհուն : և եթէ նախկին  
եակ է դնօղ անվախճանէլի իրացն .  
ուրեմն ինքն աներկբայ գեր’ իմե  
րոյ է քան զանհուն :

Իսկ եակն առաջին ստեղծեալ , դի  
իմացութիւն , ոչ է հունառ’ այլ  
մանաւանդ ասի անհուն . ապա է  
ակն նախկին՝ է չսփ եակացն իմա  
նալեաց առաջնոյ , և զդալեաց երկ  
բորդաց , զի ինքն է որ արար զնմ  
եակս և զնա չսփեաց չսփով ըստ

պատշաճի թմ էակին : Եւրդ՝ դարձ  
յուք և ասսացուք եթէ էակին նախ  
կին ստեղծօղ՝ գեր' իմբերոց և քան  
զանհուն . իսկ էակին երկրորդ ըս-  
տեղծօղ՝ և անհուն ե' իմբեր նախ-  
կին ստեղծեալ էակին . և երկրորդ  
ստեղծեալ էակին է ոչ հունանոր .  
իսկ այլ պարզ բարութիւնք որպի-  
սի ինչ կեանք՝ և լոյս , և սոցին նը-  
մանք են պատճառք Թմ իրաց ունո  
դաց զբարութիւնս , բատ որում է  
յանհուն պատճառէն :

Իւ էակին ստեղծօղ՝ իպատճառում  
կենդանութե՛ հեղով զբարութիւն  
իւր նախ ' իմբեր նախկին պատճառէ-  
լոյն , որ է իմացութիւն . և ապա ի-  
ջանեն ' ի վեր Թմցունց իմանալի և  
մարմառոր ստեղծեալ էութեանցն  
ժիշնորդութք իմացութեն :



Առարկութիւն Եօթն եպասներոց :

Ա մենայն զօրութեն միացեալ՝ է  
նառաւել անհուն քան զօրու ի  
բազմազատկեալ. քանզի անհունն  
առաջին ստեղծեալ, որ է իմացու-  
թիւն է հուպ պարզ միակին . վշ  
արոյ յամ զօրութեան՝ որ է հուպ  
պարզ միակին, առաւել գոյ հունա  
չորութիւն քան՝ իզօրութե, որ է  
հեռի՝ ինմանէ . զի յորժամ զօրու-  
թիւն սկսանի բազմանալ, ապակա-  
նի միութիւն նորին, և ընդ ապա-  
կանիլ միութեան նորին, ապականի  
անհնութիւն իւր. և ո՞չ ապականի  
անհնութիւն իւր՝ եթէ ո՞չ՝ իտրա-  
մատիլն : Եւ սորա նշան՝ է զօրու-  
թիւն բաժանեալ. զի որքան առա-  
ւել համահաւաքի և միանայ, այն-  
քան մշտանայ և սաստկանայ, և ներ  
գործութիւնս բազումն առնէ . և  
որչափ՝ իմասունս տրամատի և բա-

ժանի, այնքան առաւել նուազի և  
տկարանայ, և զյուռի ներդործու-  
թիւնս բացակատարէ:

Արդ՝ ահա երեւելի է, զի զօրութեն  
որչափ մերձ լինի առ պարզ միակն  
եջմարիան, այնչափ սաստիագոյն  
կայանայ մի էութիւն իւր, և որքան  
առաւելապէս լինի միութիւն իւր,  
նոյնքան ևանհնութինմա՝ է բա-  
ցագոյն և յայտնագոյն, և ներդոր-  
ծութիւնն նորին մեծամեծք երս-  
քանչելիք ևազնուականք:

### Առարկութիւն Ո-թնեցսնէրբու:

Մ անայն գոյք ունին զէութեն  
իւրեանց վշնախսկին եակին.  
Եամ կենդանիք են շարժեալք էու-  
թք իւրեանց վշնախսկին կենազն,  
Եամ իմանալիք ունին դիտութիւն  
վշն առաջին իմացութեն. քանզի  
եթէ մամ պատճառ տայ ինչ պատ-

Հառնելոյն իւրում. ուրեմն նախկին  
էակն իսկապէս տայ զդոլն ամ պատ  
ճառել' այ իւրոց. սոյնպէս և կեանքն  
տայ զշարժութեամ պատճառելեաց  
իւրոց. զի կեանքն է եղողութիւն  
ելողին նախկին՝ յանշարժ և մշորն  
ջենաւոր էակէն. նոյնպէս և շար  
ժութիւնն առաջին ըստ նմին օրին  
նախկին. և իմացութիւն տայ զդիտու  
թիւն պատճառելեացն իւրոց. քան  
զի ամչշմարիտ գիտութիւն. է՛ իմա  
ցութիւն. և իմացութիւն. է՛ նախկին  
դիոզ. որ հեղու զդիտութիւն իւր  
'իվր ամցւնց էակաց:

**ԱՐԴ**՝ գարձցուք և ասասցուք եթէ  
նախկին էակն անշարժ է պատճառ  
պատճառաց. եթէ ինքն տայ զդոլն  
ամցւնց. ուրեմն տայ նց ստեղծման  
եղանակաւ: Իսկ կեանքն առաջին՝  
տայ կեանս այնոցիկ. որք ընդ իւրե  
նե՛ ոչ ստեղծման եղանակաւ, այլ  
կերպիւ տեսակին:

Հ Յ մ ա ն ա պ է ս և ի մ ա ց ու թ է՝ ո ա յ զ է ի  
տ ու թ է ա յ ն ց , ո ր ք ՚ ի ն ե ր ք ո յ ի ւ ր ո ց  
է ն , և ա յ լ ո ց ի ր ա ց ո չ ս տ ե ղ ծ մ ա ն ե  
զ ա ն ա կ ի , ա յ լ ը ս տ ա ե ս ա կ ի ն կ ե ր ա յ ի :

Ա ռ բ ե ս թ է ւ ի ւ ն ե ր ա ն ի ր ո ց է :

**Ի** ՞ ՞ ի մ ա ց ո ւ թ է յ մ ա ց ո ւ թ  
է թ է ա ծ ա յ ի ն , զ ի ը ն դ ո ւ ն ի ՚ ի բ ա  
ր ո ւ թ ե ա ն ց ն ա ծ ա յ ն ո ց ի թ ա ն ե լ ո ց ՚ ի  
ն ա խ ի ի ն պ ա ռ ե ա ռ է ն մ ե ծ ա ւ կ ա լ ,  
մ ա մ բ : Ե ւ ո մ է ի մ ա ց ո ւ թ է մ ի ա յ ն  
զ ի ո չ ը ն դ ո ւ ն ի ՚ ի բ ա ր ո ւ թ է ց ն ա  
ռ ա ջ ն ո ց , ե թ է ո չ մ ի ջ ն ո ր դ ո ւ թ է ի  
մ ա ց ո ւ թ է ն : ՚ ի հ ո դ ե ա յ ն ո մ է հ .  
զ ի ի մ ա ց ս կ ա ն պ է կ ա խ ե ա լ յ ի մ ա  
ց ո ւ թ է ։ , և ո մ հ ո դ ի մ ի ա յ ն :

՚ ի մ ա ր թ ն ո ց ն ք ն ա կ ա ն ա ց , ո մ է յ ո .  
ր ո ւ մ ն ե ր գ ո յ հ ո դ ի կ ա ռ ա վ ո ր ո զ  
ն ո ր ի ն ե ռ ո ւ ղ ղ ի ց . և ո մ ա ն ք ե ն մ ա ր  
մ ի ն ք ք ն ա կ ա ն ք մ ի ա յ ն , ո ր ո ց ո չ գ ո յ  
հ ո դ ի : Ե ւ ա յ ս ա յ ե ր ա ղ ա դ ա ւ , զ ի  
ի ն ե . 45 ո չ

ծը է բոլորովին իմացական , և ոչ  
բոլորովին ներ անձնաւոր , և ոչ բ  
լորովին մարմաւոր , և ոչ կախեալ  
կայ զվերնոյն քան զինքն պատճա-  
ռէն . յս զի ո՛չ ամ իմացութ կա-  
խեալ է զբարութիքն նախկին պատ-  
ճառին եթէ ո՛չ 'ինոցանէ շարալը  
ցեալ երացակտրել իցէ . վս զի կա-  
րող է ընդունել զբարութիսն զի-  
ջեալս 'ինախկին պատճառէն ենո-  
քօք կախի , զի մեծ լինիցի մեծու-  
թիւն իւր . սոյնպէս ե՞շ ամ հոգի  
կախեալ կայ զիմացութէն . եթէ ո՛չ  
սովաւ շարալցեալ երացակատա-  
րեալ իցէ , եառաւելյապէս նմանէս  
ցի իմացութէն վս կալեալ ելոյ զի  
մացութէն՝ և ո՛չ դոյ իմացութիւն  
բացակատարեալ . ըստ նմին օրինա-  
կին ո՛չ ամ բնական մարմին ունի  
հոգի , եթէ ո՛չ որ իցէ 'իդմանէ շա-  
րալցեալ երացակատարեալ՝ իբրու-  
թէ լինիցի բանական . և ըստ այսմ  
կերպին այլ աստիճանք իմացիանք:

Առարիութեան Քառերարդ:

Պատճառն նախկին կառավարեց  
զմարարածս ըստ յայնմանէ,  
զի շարազու գի ընդ նս քանզի կա  
ռավարութին ոչ նուազեցուցանէ  
զմբութին նորին զվերացեալ քան  
զեմ գոլն, և ոչ առականէ զնա, և  
ոչ արգելու զնա էութի իւր միու  
թե տարորոշեալ յէու եցն, մի գու  
ցէ կառավարեսցէ զնն վն զի պատ  
ճառն նախկին է հաստատուն՝ կաց  
ուն միշտ հանգերձ պարզ միութիք  
իւրով. և նա ինքն կառավարեց զամ  
ստեղծուածս, և հեղութինն զորու  
թի կենաց և բարութեց ըստ կերպի  
զօրութե և կարողութե ընդունու  
զաց. քանզի բարութի առաջին հե  
ղու բարութիս յնմ էութիս միով  
հեղմամբ. սակայն իւրաքանչիւր  
ոք յէութեց ընդունի իյեղմանէն  
յայնմանէ ըստ կերպի կարողութե  
նէ

ნდილუნ ჩერივ . ნერარიცმები აოა  
გრი თუ հեղიւ բარიცმენ ემხო  
მენ ესტე თუ მოქალ ჩერაყჩა , იქ բა  
რიცმენ ჩერ ფილიქ ჩერ ხიცმებ ე  
ჩერ დირიცმებ მას იქ բარიცმენ  
ნედირიცმენ ნე ხიცმენ ნე მე ჩერ  
ცერტ თუ ცახინ ნახსენ ნე բარიც  
მხილნ ნირჩნ ნე მე ჩერ . აჯაყხა ნ  
ჩუქნ მრიდ հեղმამწ հեղიუ բარიც  
მხილნ ჩერტენ . բაჯვ բა  
რიცმხილნ ნე აყარდ ნე ღანაღანჩა  
' ჩამარა ადმანე ლიტილი ილი .  
განეს ლიტილი აკ ბარიცმენ  
თუ հალას არა აყხა ლიტილი , აკ  
იმან დ ჩერიცანე აოა ლილ , ნე იმან დ  
ნილად : ზე არა ქა მდიც აოა  
ათა გა გა გა გა გა გა გა გა გა  
ცერტ ფარაგიც ნე ასასეც ნ  
ძე ' ჩერტ მა დირდილი ირ დირდე  
ხიცმებ ჩერიდ მრავა , ნე ' ჩერტ დირ  
დე ლიდ თუ დი გა გა გა გა გა გა გა  
აკ ჩერ დ დ დ დ დ დ დ დ დ დ დ დ დ დ

Ա. Պործուին և գործելոյն Եթէ հը<sup>առ</sup>  
առ դրուեթիւն իվը գորշն զի յոր  
ժամ գործուն և գործէ լն լի ին  
գործեօք ոչ գործէ գորովն իւրով  
և լինին բաղադրեալք մս որոյ ըն  
գունուն ընդունի շարունակութիւն  
'ի մէջ ինքեան և գործողին իւրոյ  
և յայն ժամ գործուն է սարորոշել  
'ի գործելոյն իւրմէ :

Խսկ ներգործողն ի մէջ իւրոյ և  
իւր գործոյն չիք ամեննեին շարու  
նակութիւն է ներգործող ճշմարին  
և կառավարող և իրաց գործ լու  
գոխն նի զարդարման զկնի որոյ  
ոչ կարէ այս իմն զարդ գոյ և կառա  
վարէ զգործն իւր վեռջին կառա  
վարութիւն քանզի կառավարէ զէ  
րոշութիւն արարոշական կերովիւ,  
և ոչ այս իւր եթէ ոչ իւր գորովն  
ուրեմն էակն իւր միայն է կառավա  
րութիւնորին որոյ աղագաւ կառա  
վարէ և գործէ ուտ կերովի կառավար  
Պ Ամս 49 ման

Ժ. Ն զարդոց և կառավարութե. յա  
րուած ոչ գու զանազանութիւն և ոչ  
շփոթութիւն և ոչ զանազանին ներգոր  
ծութիւն և կառավարութիւն վաստա  
ճառաց առաջնոց եթէ ոչ սակա վար  
ձալնդունողին:

Ա-րի-բի-ն Վ-աւ և Տ-ի-ր-ի:

Կ ախիինն հարուստ է ինքնաբ  
երաւետ հարուստ որոյ նշա  
նակութիւն է միութիւն նորին. ոչ է  
թէ զիսութիւն նր իցէ միուեալ ՚ի  
նմա, այլ զի է մաքուր և անխառն  
միութիւն. քանզի է պարզ անհուն  
պարզութիւն: Խսկ եթէ որ կամկցի  
զիսուել թէ պաճառն նախկին է հա  
րուստ ձգեսցէ զիսու իւր իբաղա  
գրեալ էութիւն և բնուեցէ զնո՞ւ վե  
րահասեալ որոնմամբ և գտոցէ զամ  
բազադ րեալսն գոյ նուազեալ և  
կարօտեալ կամ այյու միմիք. կամ

Իրացն՝ յորոց շարամանեալ լինին.  
Եկ պարզ էու է ին՝ որ է բարու ի  
է մու. և միութի նորին՝ է բարու  
թիւնն՝ է մու իր:

Արդ՝ այն իրն՝ է հարուսոյ յաւետ,  
որ հեղու յալլս. բայց ՚ի վը նորա  
ոչ լինի արտահեղումն ՚ի ձեռն այ  
լոց իւրովք շարժողացն խի այլ ի  
մանալի կամ մարմն. Հոր էու թիւնք  
են ապականելիք ոչ ինքնին հա  
րուսոր. այլ մանաւանդ կարօալք  
միում չ, մարիս հեղշի ՚ինս զբա  
րութիւնս և զեմ շնորհս.

❖ \* ❖  
**Ա-րդ-ի-ն Վասն եւրիւ երբէ:**

Վառձառն նախիին՝ է գլուխե  
րոյ ՚ի վը ամ անուան, որով  
անուանի. զի ոչ վերաբերի առ նա  
նուազութւն, և ոչ շարալրութի  
մայն. այլ մանաւանդ ՚ի վեր է քան  
զնամ շարալրութիւն. քանզի նուա  
ծա 51 զէալճ

զեալն է ոչ շարացեալ, և ոչ կառէ  
առնել ներդուծութիւն կաստրել  
նուազեալ գորով. իսկ շարացեալն  
առ մեղ թէուէտ ինքեամբ բաշու  
կայացեալ իցէ, սակայն ոչ կարէ ըս  
տեղծագործել այլ ինչ, և ոչ ամեւ  
նեին հեղուլյիւրմէ ինչ:

Արդ՝ եթէ այդսէս իցէ, առ մեղ  
ասեմք, եթէ նախկինն ոչ է նուա  
զեալ. և ոչ շարացեալ միայն. այլ  
պէր իվերոյ քան դշարացելն, քան  
պէ է ստեղծող իրաց, և հեղուլ բա  
յուլիւն, ինուա կառսրեալ հեղ  
մամբ դի է բարութիւն յորուժ ոչ  
պոյ մախճան և ոչ շափակցո թի:

Առաջ բարութիւն նախկինն լնու զա  
մենայն եւ իրորդսն բարութիւն. սա  
կայն ամենայն եւ իրորդն ոչ ընդ  
ունի ի բարութիւն այնմանէ, եթէ  
ոչ ըստ կերպի կարողու է իւրոյ:

Արդ ահա յայտնի իսկ եղեւ, եթէ  
պասճառ նախկին դեր իվերոյ է

Հան դամենայն անուն, որով ա  
նուանի և վերնագոյն  
և բարձրագոյն:

Առաջնորդիան Քառեւելքը :

Ա մենայն իմացութիւն ածային  
գիտել պիրս այնու, զիէ իմա-  
ցութիւն և շնէ նոցա, զիէ ածային.  
քանզի իմացութեան ցայտնութիւնը  
զիտութիւն, և ոչ գոյ շրազութիւն  
և կատարելութիւն նորին եթէ ոչ  
իցէ գիտուն:

Արդ իշխողէ ած օրհնեալ և  
բարձրացեալ. զինա իւժն զնոմ  
իրս լնու բարութեամբը. և իմացու-  
թիւնէ առաջին պատճառելին, և  
առաւել նման այ բարձրելոյն. վա-  
որոյ և ընդ իւր և իրացն իշխէ:

Եւ զոր օրինակ ած օրհնեալ և  
բարձրացեալ հեղու բարութիւնն  
իվը իրաց նը նոյն և իմացութիւն

զորու զբիտութե՞ ՚ի վերայ իրացն  
որք ՚ինելքոյ նորաեն . բայց թէ  
այէտ իմացութիւն իշխէ ՚ինելքոյ  
իւր իրոցն , սակայն ած օրհնեալ  
երարձոայեալէ գերանվանցէ իմա  
ցու թեանն իշխողութբ . և իշխէ  
իրացն իշխանութեամբ ըստ գերա  
ցոյն երարձրագոյն կարդի քան  
զիմացութիւն . զինա ինքն զայն  
իշխանութիւն տայ և սարքեէ իւ  
մացութե իրողութեք :

Եւ զի իրողութեքն որք ընդու  
նին զիշխողութիւնն իմացութեան ,  
նա ևս ընդունին զիշխանութիւնն  
ըստեղծողին իմացութե . աստու ստ  
յայտէ քանզի ոչոք յիրողութեցն  
գախչի և ոչ զերծանի ամենելն  
յիշխողութենէ նորին . զի կամի առ  
նել զամենեսին համանգամայն ըն  
դունակ բարութեց իւրոց վասն  
զի չեք իր ինչ որ ցանկաց իմացու  
թեան և ոչ ցանկանայց ընդունել  
ծոյ 54 զնա

զ՞ա, արարենք բին ցանկան բարու  
թեանյն ՚ինախինէն, և բալում  
կարսոիւ գի գիաքին ընդու  
նել զնա :

Առ-քի-թի-ն Քուն և դ երբե :  
Պ

Պատճառ նախին յեմ էութիւ  
կայ ըստ միում տրամադրուե .  
այլ ամ էութիք ոչ գոն ՚ինախին  
սպառճառն ըստ միում տրամադրու  
թեան . քա զի թէկոյէտ սպառճառն  
նախին կայ յա Անայն էութիս ,  
սակայն իւրաքանչերոք ընդունի  
զնա ըստ կերպի կարողուե իւրոյ .  
զի էութեանյն ոմանք ընդունին  
զ սպառճառն նախին միացեալ կայ  
մամբ , և ոմանք բազմա սպառկեալ  
կալմամբ , իսկ ոմանք յաւիտենա  
կան կալմամբ , և այրք ժամա

նկանրո կալմամբ :

Եւ գարձեալ ոմանք հոգ ևոր կաց  
ծե 55 մամբ

մամբ , և ոմանք մարմաւոր  
կալ մամբ :

Բայց պանազանութիւն կալմանն  
ոչ 'ինախսկին պատճառ էն լինի ,  
այլ 'իկողմանէ ընդ ունողին . զի ըն  
դունօղն պանազանի . որոյ աղագաւ  
երնիալ-ալն զանաշանեալ լինի իսկ  
հեղին մի ելով ան հասաթար . հա  
շասարապիէս հեղու զբարութիս  
յամենայն էութիս . զի բարութին  
նախսկին պատճառին հանգիտաթար  
հեղու յամենայն էութիւնս :

Բայց պատճառ զանազանութեան  
հեղմամբ բարութին յէութիսէն  
նոյն ինքեանք էութիւնքն :

Աղա առանց երկթացելոյ ամենայն  
էութինք ոչ գտանին 'ինախսկին  
պատճառն միով եղանակաւ :

Արդ ահա ցուցաւ . թէ պատճառն  
նախսկին գուանի յամենայն էութիս  
միով կերպիւ իսկ ամենայն էութիք  
ոչ գուանին 'ինմա լը միում կերպի

աւրեմն ըստ կերպի՝ մերձաւորութեա  
առ պատճառն նախկին և ըստ կա  
րողութեան իրին ընդունել զպատ  
ճառն նախկին ըստ այնմ քանակու  
թեան կարէ ընդունել զնա, և միսի

թարիլ նովա՛ :

Քանզի էուժիւնք ինչ ոչ ըն  
դուին՝ ինախկին պատճառէն, և  
ոչ հեշտանայ՝ ինմին, եթէ ոչ կեր  
պիւ գոլոյն իւրոյ այսինքն  
ճանաշման :

Քանզի ըստ կերպի՝ որով ճանաշէ  
իր զպատճառն նախկին, ըստ նմին  
քանակութեան ընդունի առ՝ ինը  
մանէ և հեշտանայ՝ ինմա  
որպէս ցուցաք :

---

Առաջին բառ է եւ երրորդ :

Պոյացութիւնք իմացեալք իմա  
նալիք ու են ստեղծեալ յէուշ  
այլմէ. ամենայն գոյացուն կայուն  
ծէ 57 էու

Առաջեամբ իւրով՝ ոչէ առեղթաել  
յայլմէ իւե՛ իսկ եթէ ոք ասիցէ կարե  
լիէ դոլ զի ծնեալ իցէ յէ ու թէ այլ  
մէ . . սեմք եթէ կարելէ զի գոյա  
ցու ի կայուն էռաթթիւրով ծնաւի  
զի յեռաթենէ այլմէ :

Ապա առանց երկիքայութեան գոյա  
ցութիւն այնէ նուազեալ կարօտ  
լանիր յալմէ յորմէ ծնանի. որոյ  
նշանակուի է նոյն ինյն լինելուն  
(վշ զի լինելուն) է ճանապարհ ՚ի  
պակասութենէ առ շարայրուն ՚ի . զի  
եթէ իր ինչ պտանից ոչէ կարօտ իւրում լինելուն այսինքն իսեակումն  
և առականական որութե իւրօւմայրում  
ի կը եթէ ոչ ինքեան և ինքնուատ  
ճառառեսական որուն և կատարելուն  
իւրուն րեմնէ միշտ շարայրուն և կա  
տարել բայց ոչ ինի առական որուն  
և շարայրուն ւարոյ եթէ ոչ զերսքե  
րում իւրով առ միշտ պատճառն իւր  
Ապա ուրեմն ան համեմատութենէ

Նորին աւեսակաւորութեան և շարտ  
լրութեան համագամայն :

Արդ՝ ահա յայտ իսկ եղե եթէ  
աւենայն գոյացութիւն կացեալ  
իւր էութեամբ ոչ է ստեղծեալ  
յէութենէ այլմէ :

Առարջա-թիւն Ճ ԼՇ ԵՐԵՒ :

Ո մնայն գոյադութե ինքնակաց  
ոչ անկանի ըստ ապականութք։  
իսկ եթէ ոք ասիցէ կարելի դոլ  
ինքնակայ գոյացութեան անկանիլ  
ընդ ապականութեամբ պատահա  
նեմք և ասեմք էթէ կարելիէ ինք  
նակայ գոյացութեան անկանիլ ըստ  
ապականութեամբ ապա կարելիէ  
և էութիւն նորին տրամատիլ և լի  
նիլ հաստատուն կայուն էութիւն  
իւրով առանց էութեան իւրոյ որէ  
անպատշաճ և անկարելի քանզի վա  
ելոյ մի պարզ և ոչ շարամանեալ է  
պատճառ և պատճառէլի համանդա

մայն, և այսողէս ելով միշտ անառա  
կան մնայ, իսկ ամենայժը ըստ անկանե  
լոյն ը ապականութեամբ, ոչ լինի  
ապականութիւն, եթէ ոչ վա իւր  
տարանջատման՝ իսպատճառէն իւր  
մէ, բայց՝ ի մնալ իրին՝ ի ձեռն պատ  
ճառին իւրոյ որունի զնա և սրահէ<sup>ոչ</sup>  
ապականի :

Արդ եթէ այդ այդ որո՞ցէ, ուրեմն  
գոյացո թիք կայացեալք էու իւր  
բեանց՝ ոչ իբաց որոշն՝ իսպատճա  
ռէն իւրենո զի անանջատէլիէ պատ  
ճառ յէու իւրմէ, քանզի ազանու  
նորինէ տեսուի իւր և ոչ լինի պատ  
ճառ իւրեան ինքեան, եթէ ոչ վէ  
րաբերո թեամբ առ պատճառն իւր  
և այն վերաբերութիւննէ տեսակա  
շորութիւն նորին, և վասն ելոյ  
միշտ վերաբերեալ առ պատ

Հառն իւր . Նոյն ինքնէ պատճառ  
այնր վերաբերութե . և նոյն ինքէ  
պատճառ իւրեան ըստ առօցեալ  
կերպին և ոչ անզանի և ոչ աւերի .  
և ոչ անապահանի . զի նոյն ինքնէ  
պատճե և պաշտելի համանգամայն :  
**Արդ** ահա սուրբեցաւ եթէ ամ  
գոյացութիւն ինքնակաց ոչ առա  
կանի , և ոչ սէերեսլ լինի :

❖ աստիճան աստիճան ❖

**Աստիճան** է և է երբետ :

**Ա** մենայն գոյացութիւն առակա  
նելի ոչ մշանջենաւոր՝ կամ է  
բաղադրեալ . կամ յեցեալ յայլ  
իրողութրւնս :

**Ք**անդի գոյացութի կամ է կարօտ  
իրացն յորոց լինի և է շարմանեալ  
'ի նոցանէ . կամ է կարօտ հաստա  
տութեան և եռեթեան իւրոց :

**Ա**րդ յորժամ 'ի բաց օրոշի պատ  
ճառն վերաբերօղ կորնչի և ապա  
կա 61 կասի

կանի իսկ եթէ գոյացութիւն ոչ է  
բաղադրեալ . յայն ժամկ պարզ և  
միշտ և ոչ առահեանի և նուազե  
ամենեին :

Ա-ս-րէ-թէ-ն է և եր-ր-ր-:

մենայն գոյացութիւն կայուն  
էութեամբ իւրովէ պարզ .  
և ոչ տրամատի . իսկ եթէ ոք ունիցի  
կարելի գոլ ինքնակայ գոյացութիւն  
տրամատիլ և նա ինչնէ պարզ կա-  
րելի և էութեան մասին նորին գոլ  
էութիւն իւրով միւսանգամ որպէս  
և էութեան բոլորին :

Արդ եթէ արդ կարելի ապա մասն  
գառնայ ՚ի յինքն և ամ մասն նորին  
գառնայ յիւր վերայ :

Որպէս երոլորն յիւր էութե վը  
և այս անկարելին :

իսկ այս եթէ ան կարելին ուրեմն  
գոյացութիւն կայուն իւր էութիւն

գոյացութիւն անբաժանելի և պարզ  
Քանզի եթէ ոչէ պարզ այլ բա  
զարեւը մասն նորին է լաւագոյն  
ք զմասն և վատթարագոյն այլ մասն  
քան զմիւսն սւրեմն իր լաւգոյն  
է բա՛ զ' ի վատթարագոյն իրէն .  
և իր վատթարագոյնք անզի՞ ի լաւա  
գոյն իրէն զի ամենայն մասն նրէն  
անջառեալ յամ մաւնեն նորին . վա՛  
որոյ բոլորութիւն նորին ոչէ ինք  
եամբ բաւական կարօտելով մա  
սանց յորով բաղադրեալ լինի . իսկ  
այս օտարէ՞ / բնութենէ պարզիցն  
այլ մանաւանդ հետեւի բնութեան

բաղադրելոյն :

Ահա յայտէ եթէ ամ գոյացութիւն  
ինքնակայ է պարու և ոչ բաղադրել  
և ոչ բաժանի և ոչ ընդունելով  
զշրամանութիւն կամ տրամադրութիւն  
պարզ գոլով ոչէ ընդունական ա  
պականութեն որպէս ցուցաւ :

Առաքիւթեան վ և բ երրոր :

Ա մենայն գոյացութիւն պարզէ  
ինքնակայ՝ այսինք կայուն  
էութեամբ իւրով զիէ ստեղծեալ  
թարց ժամանակի և յիւրում գոյա  
կանութեէ զերադոյն յան զընդ  
ժամանակաւ գոյացութիւնս :

Եւ զի ոչէ ստեղծեալ յումբէ  
յայտէ քանզիէ ինքնակայ ։ իսկ  
գոյացութիւնք ստեղծեալք յայլմեն  
գոյացութիւնք մարմաւորք և բա  
զադրեալք անկեալք ընդ ապակա  
նութեամբ և յնելո թեամբ :

Արդ ահա երեւելիէ ։ զի ամ գոյա  
ցութիւնինքնակայ ոչէ իժամանակի  
քանզիէ վերնագոյն և բարձա  
գոյն քան զժամանակ և քան զժա  
մանակաւոր էութիւնս :



## Առարկանիւն Հ Երբե:

Առաջն գոյացութեն ստեղծելը  
իժամանակի կամ է միշտներ  
Ժամանակում և Ժամանակ ոչ ար  
արուահոսի ինմանեւ զի է ստեղծել  
ուպէս և Ժամանակն հաւասարապէս  
կամ վերահոսի ի վր Ժամանակի և  
Ժամանակն արտահամի ինմանեւ  
զի է ստեղծեալ ի միում մասին Ժա  
մանակի վազ զի եղեալ զետեհին  
զկինի իուրաց իսկ վերնագոյն գոյա  
ցութեն ոչ ինչ զկնի հետեւի եթէ  
ոչ գոյացութեն ստորնագոյն նման  
նին և ոչ նանման քան զի ի գոյա  
ցութեանց ոմանք նմանքն գոյա  
ցութեն վերնագուն ն և ոմանք  
ստեղծեալ յորոյ ոչ արտահամի  
Ժամանակ որք նմանին մշտնթենա  
չոր գոյացութեանց և ոմանքն  
քարշեալ իժամանակէն պահան

ու եարք ՚ի մէռ մ մասին ջամանակի  
ու րէն անկարելի է Եթէ զոյա  
ցութիւնը ու աս Ճառելով ՚ի մէռ մ  
մասին ժամանակի համահետեւ  
ցին մշան ջենաւոր զոյացութեցն.  
զի ու նմանին նոյա ամանեին :  
Արդ զոյացութիւնը մշան ջենա  
ցորք ՚ի ժամանակի էն այնու իկ որք  
համահետեւ ին զոյացութեցն մշան  
ջենաւորաց և են մի ջրնք ՚ի մաջ  
կայուն զոյացութեանցն և ի մաջ  
եղել ցն ՚ի ժամանակի :

Բայց ու է կարելի զի զոյացութեց  
մշան ջենաւորաց ու քեն ՚ի վերքան  
զժամանակին հետեւ կային զոյացու  
թիւնք ըստեւ ժեալով ՚ի ժամանակի .  
Եթէ ու մ ջնորդութեամբ զոյա  
ցութեանցն ժամանակաւորաց մշան  
ջենաւորաց ընժամանակում :

Լ այսորքիկ զոյացութիւնը Եղեն  
մի ջրնք վաս հաղորդ ելոյ զոյացու  
թեացն վերնագութիւն ՚ի ցարանի

ցութեանն, և հաղորդքի լոյ գոյացու  
ցութեց ժամանակաւորաց ի բաց  
հաստից իժամանակի ։ Հան լինե  
լութեան ։ Այս զի ։ Դրեանք թեսնիս  
են մշուջնան որը սակայն առաջ  
զութի սոցակ լինելու թեամբ և  
շարժուել ։ Իւ գոյացութեք մըք  
անդենաւորը հանգերձ ժամանա  
կաւեն նմանք գոյակութիւն մշու  
ջենաւորաց որդեն իվ ըքան զան  
մանակ յարաւուազութեամբ և ու  
համանմանին նոյա ըն շարժու  
թեան և բնելու թեան :

Կ, մանառէս գոյացութեանց որը  
զիք ի պէտոյեն քան զժամանակ  
կերպիւ իւն կամ շարժութեամբ։  
Ա րդ եթե ոչ նմանին ոչ ոչ կարեն  
բժբանել զնոսա և ոչ շոշ միեաց ։  
Ա րդ առա ուրիշն հարկաւոր  
գոյառութեք ուր ոն չըշտիլ լ զդոյա  
ցութեն մշուջենաւուազ զայտուիկ  
ուր ի պէտու քան զժամանակ ։ Խ  
կէ 67 եղէ

Հղին շօշակմող դոյսցու թեանցն  
որքեն՝ ժամանակի այսինքն ընդու  
նելու թեամբ և ապահանու եռարեմն  
համահանաւ ին շա, ժո չ իւրանց  
՚իմէջ մշտնջենանոր գոյացու թեցն  
որք են ՚ի վեր քան զժամանակ և  
՚իմէջ գոյացու թեց որքեն ընդ ժա  
մանական և համահանարիւ անո  
զու թեամբ իւրեանց ՚իմէջ գոյա  
ցու թեանց որք ՚ի վեր են քան զժա  
մանակ և ՚իմէջ գոյացու թեանց որք  
են ընդ ժամանական այսինքն որք  
են անկեալ ընդ ինելու թեամբ  
և ապահանու թեամբ :


Եւ շառամքան ՚իմէջ բարի գոյա  
ցու թեանց և ՚իմէջ յոռի գոյացու  
և անց և ՚ի բաց կացցեն յամենայն  
բարու թենէ և յամենայն անողու  
թենէ և ոչ գուցենոցա յարամնա  
ցու թե և ոչ հաստատու թիւն :

Արդ ահա ցուցաւ թէ յարամնա  
ցու թեան երկու են անսակք ո՞ն յա

Հիտենական Առն Ժամանակաշոր:  
սակայն երկողունցն միննէ կայուն  
դադարեալ և միւսն շարժի. և մինն  
շարամօտի առ վաղմանական բա  
զադրութի և ամ ներդործութիք  
նորին են համանդամայն. և ոչ այլ  
քան զայլ յառջադոյն. իսկ մըւսնէ  
շարժուն և տարածեալ որոյ ներ  
դործութեանցն ոմանքենի յառաջ  
քան զայլսն երդորութիւն միոյն  
'ինոցանէ 'ի ձեռն էու թեան իւրոյ  
իսկ միւսոյն բոլորու թի է 'ի ձեռն  
մասանց իւրոց յորոց իւրաքանչ  
իւրն գոյ որոշեալ համահաւասա  
րին իւրում ըստ առսջին  
և վերջին կերպին :

Արդ ահա երեելի է թէ 'ի դոյա  
ցութեցն ոմանքեն մշ. նջենաւորք  
և 'ի վեր քան զմամանակ և ոմանք  
մշանջենաւորք հաւասարք ժամա  
նակին. և ժամանակ ոչ արտահոսք  
'ինոցանէ . և ոմանք արտաքարշէրք  
կ թ 69 'իմամա

Օ Ր Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ե Ց Ե Խ Ձ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ր  
Ա Պ Ա Հ Ա Ս Ի ՚ Ի Շ Ո Ղ Ա Ն Է ՚ Ի Վ Ե Ր Ա Պ Ո ւ  
Ն Է Ն Ե ՚ Ի Ս Ո Տ Ո Ր Ե Ա Պ Ո ւ Ն Է Ն Շ Ո Ղ Ո Ւ Ն Ծ  
Ա յ ս ի ն ք ՞ ՚ Ի մ ա ս ն է ա ռ ա ջ ի ն Ե ՚ Ի  
մ ա ս ն է պ կ ։ . Ե Ե Ն Գ Ո Վ Ա Ս Ո ւ Թ ի ւ ն ք  
ա ն կ զ ա ք ը ը ն դ լ ի ն ե լ ո ւ թ ե ա մ բ ։  
Ե ա պ ա կ ա ն ո ւ թ ե ա մ բ ։



Լ Ա Մ Ա Ն Ա Կ Ե Ց Ե Խ Ձ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ր Ե Ր Ո Ւ Տ ։

**Ի** Ռ Ջ Ի Ր Բ Շ Ո Ր Ո ւ գ ո ւ ա ց ո ւ թ ի ւ ն  
Ե հ ր ա գ ո ւ ծ ո ւ թ ի ւ ն է ն ՚ Ի ս ո տ ո ւ ա  
շ ա փ ո ւ թ ե Ֆ ա մ ա ն ա կ ի ի մ է ջ կ ս յ ա  
ց ե ա լ ո ր ո ւ գ ո ւ ա ց ո ւ թ ի ւ ն ՚ Ի ս ո տ ո ր ա  
շ ա փ ո ւ թ ե ն յ ո ւ ի ս տ ե ն ա կ ա ն ո ւ թ ե ն  
Ե ի ր ա գ ո ւ ծ ո ւ թ ե ն ՚ Ի ս ո տ ո ր ա շ ա փ ո ւ  
թ ե ա ն Ֆ ա մ ա ն ա կ ի ի վ ա ս ն ղ ի է ո ւ թ ե ն  
օ ր ո ւ գ ո ւ ա ց ո ւ թ ե ն ն ա ն կ ա ն ի ը ն դ  
Ֆ ա մ ա ն ա կ ա շ , ա յ ս ի ն ա ն զ օ ր Ֆ ա մ ա  
ն ա կ չ ա փ է ն ա ր ա մ ա ն ա յ ն ա ր ա մ ա գ  
ը ո ւ թ ե ն ս ի ւ ր է ա ն կ ե ա լ ը ն դ Ֆ ա

մանակաւ որոյ սակա և իրագործու  
թիւն նորին անկանի ը ժամանա  
կաւ . քանզի յո, ժամ դոյացու թի  
իրին անկանի ընդ ժամանակաւ ա-  
ռանց երկբայութեան և իրադոր  
ծութեան նորին հարկէ անկանիլ  
ընդ ժամանակաւ :

Իսկ էութիւն անկեալ ընդ ժամա  
նակաւ նա ( յամ տրամադրու թիս  
իւրէ՛բացուոշել յէու է անկելոյն )  
յամ տրամադրուխուր ը յաւիան  
նականու ե : յանզի շարունակու նն  
ոչէ՛եթէ ոչ' ի վր բաց նմանից :  
Ա հա հարկէ զի իցէ իր ինչ երրորդ  
մջին ՚իմջ երկոցունց որոյ դոյա  
ցութիւն անկանից ընդ յաւիան  
նականութեամբ . և իրագործութիւն  
նորին ը ժամանակաւ . քանզի ան  
կարելիէ իրին դոլ որոյ դոյացու ն  
անկանից ընդ ժամանակաւ . և իրա  
դործո թիւն նորին ընդ յաւիա-  
նականութեամբ . զի այսպէս իրա

պու ծութիւն լինէր յաւագոյն քան  
զիւր գոյացութիւնը որէ անկարեցիւ  
**Ա**րդ յայսնի իսկ եղե եթէ ՚իմբ ջ  
եռ թեանց անկելոց ընդ ժամանա  
կաւ հանգերձ ամենայն տրամագ  
րութեամբը և իրագործութեամբը  
և ոյացութեամբը իւրեանց և՝ ի  
մլջ էու թեանց որոց գոյացութիւնը  
և ներգործութիւննք են անկեալը ՚ի  
ներքոր ստորաշամփութեան յաւի  
տենականութեն գոն էութիւն իմ  
իւրեանց գոյացութեամբը անկելու  
ընդ յաւիտենականութիւնը և իրագոր  
ծութեամբը անկեալ ընդ ժամա  
նակաւ ընդ որում բացախրանք:

†

**Ա**սորիւթիւն լուս եւթ-թ :

**Ա**մենայն գոյացութիւն ՚ի վերսց  
ումանց սրամագրութիւնը ան  
կիաց ընդ յաւիտենականութիւնը և  
իւլլ իւր տրամագրութիւնը անկեալ

ընդ ժամանակաշաւ՝ գոյ էակ և լինք  
լութե համանդամայն. բանդի ամ  
էութե անկեալ ընդ յաւիտենակա  
նո. թշե ճշմարսասուէս էակ և ամ  
էութե անկեալ ընդ ժամանակաշէ<sup>է</sup>  
լինելութիւն իսկապէս :

Արդ եթէ այդ այդպէս իցէ ու-  
րեմն էութե ճշմարսապէս անկել  
ընդ յաւիտենականութիւն և ժամա-  
նակաշ է էակ և լինելու ի ոչ մով  
կերպիւ, այլ կերպիւ և կերպիւ :  
Ահա երեւլիէ յասիցէ լսցս թէ ամ  
եղեալն գոյացութիւն իւրով անկել  
ը ժամանակաշ, ունի գոյացութիւն  
կախեալ զպարզ գորոյն. որէ պատ  
ճառ յարատեռ ոգութե և պառնառ  
ամենայն մշանջւնաւոր և ապակա  
ների էութեանցն :

Եւ հարկաշորէ՛ զի մինն իցէ էակ  
առնօդ ստանարոյ զ թութիւս և ինքն  
ոչ ստասցի. բայց այլ ամ միութենքն  
ստացեալ լինին :

Քշւղոր ասեմս զայս ինչէ եթէ գը  
ստանիցէ մին առնօղ ստանալոյ զոք  
ստացեալն . և միւսն առնօղ ստանա  
լոյ զըստացեալն յահմամ որ տար  
բերութիւն է՝ իմջ երկոցունցն  
քանզի ոչ կարէ լինլ եթէ ոչ կա  
միցի նման նմին յամենայն տրամադ  
րութիս իւր ևամ լինիցի տարբե  
րութիւն իմջ Երկոցունցն :

Ա րդ եթէ է՛ նման նմին նամենաց  
նում տրամադրութիւնս իւր յոր  
ժամ մինն ՚ինոցանէ ոչ է՛ առաջն  
է միւսն երկորդ . և եթէ չիցէ մին  
՚ինոցանէ նման մլւոցն եամենայն  
տրամադրութիւնս իւր յայնժամ  
առանց երեքայութէ մին ՚ինոցանէ  
առաջն և մըսն երերորդ :

Ա հա յոռում դոյ միութին հաստա  
տուն ոչէ կսիեւար դարրմէ նա է՛  
մին նախկին չշմարիտ ոնդ պուցաք :  
Իսկ յորում դոյ միութին ն ըստա  
ցեար յայլմէ նաէ դատ ՚իմդուն  
հր 74 համ

Նախկին Նշմարտե՞ն :

Արդ եթէ յայլմէ ապա 'ի միոյն  
նախկին Նշմարտե՞ն է՛ զբացեալ  
միութիւն ու րեմ աստուստ լինէ  
յայտ որ միութին նախ իցէ միոյն  
Նշմարտին և ապա միութին այլոց  
և ոչ իցէ գարձեալ միութին, եթէ  
ոչ 'ի նախկին Նշմարիո միոյն որէ  
որատեառ միութեան :

Ահա յայտէ եթէ ամենայն միութին  
զկնի միոյն Նշմարտին է՛ ստացեալ  
և որատեառեալ :

Ս սկայն մինն նախկին Նշմարիուն  
ստեղծող միութեանց առնօղ ստա  
նալոց զու ստացեալն ոնդ չու ցաքը :

Արդ գուզնաբեաց բանս թարդ  
մանեալ եղե 'ի լամինացոց

'ի ձո՞ն ու րում լի հացի  
ստեփաննաս կրօնաւորի

'ի փառս քսի այ յու-  
աոյն միոյ ամեն :

նորհօք ան Ամենակալի .  
և բարեխօսութիւն տիրու հ  
ոյ մի շո կոյս Աժածնին .  
**Ե**սրբոյն Քաբրիէլի՝ Ածոյին և  
ըստանչելի խորհրդոց յայտնող  
հրեշտակազն պետի՝ եղերեցաւ ,  
յանելոց և իկառարեհոս գրդուկո .  
որ կոչի պատճառաց : ) և ըստ իրաւ  
անց կոչեզաւ պատճառաց զի՞ն  
ձեռն պատճերեաց քննելով զոլատ  
նառն՝ հասանի առ անողատճառե  
ցեար պատճառողն պատճառելեց .  
որէ անօտեղժ բարութիւնն . որոց  
ահենառերողութեանն , ամենիմաս  
տութենն . և ամենաբարութեանն՝  
ուռաջի անմահ և պատռական զա  
հոյից սարսս զելի արքայից տուեց  
ծոռին . այսէ առաջի նրբարձնեին .  
Ճշմարտառես, և սերոյ ազի իւր մը

տաց կատարելոցդ՝ ծունը լգում  
արկեալ պատկառ և խոնարհ չի լմաք  
մասց. Այեղալի և զամօթալի երեսա  
սրբիս առ եւ կրաւ և առ ոչնչեւ  
ունելով համբոյր. սէր. և համակա  
մութեն մատշի, զաեր ցոյց և ալով  
'ի սիրոց նորին 'ի թափուր  
երեսովէս . ) :

'ի Հայապետութեն Տեառն Ապա  
րու ամենացն Հայոց Կաթողիկոսին  
և 'ի Պատարիարքուեն ՈՒՐ Ամո  
ռոյն Ա. Տ. Տեառն Յակոբայ  
Ածարբան Վարդապետի :

Հրամանաւ կուտանդինու պալսոց  
պատրիարքի Տեառն Մինասայ  
Նպնազգեաց վրդպատի :

Ի սպարանի հանճարեղ և նրբիմաց  
բարսեղեան գաբրիել գպարի . 'ի  
թուի վրկշն և շն հին 'ի մայի  
սի 10 ին .

'ի վերջբանս ով ծարաւ ի. թ տեսա  
կան եղործնական գիտուեն ու րախ  
հէ 77 լէ

լերուք ընդիս զի թեղիւտ ըստ ամե  
րունական բանին զկորուսելն, այս  
ինքն ի գրչաց զաղաւաղելս ոմանա  
ոչ կարացի գտանել. սահայն ուրչ  
կորուսեալն արձանագուեցի զի մի  
կարիցէ եղի եմզի իդէպէ ինձ ասս  
յանդ դնու թես յանդիմանու թէ.  
որ ըստ իրիք կերպի կարեն ոմանք  
առել թէ եթէ ոչ կարէիր գը  
տանել զի արդ զքեզ այս իրակու  
թեանս իմէջ մուեցէր զի թերես եւ  
ցէրոք կարողագոյն քան զքեզ.  
որ ձեռնամուխ լինէր աշորիկ դոր  
ծոյ, ասեմառ այն թէ այնպիսի կա  
րողն քան զայս մեծամածացն ձեռ  
նամուխ լիցի և զեզ այնու որար  
առենցէ բաւէ նորամուզդ :





